ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<< 10 >> << դեկտեմբերի >> 2018թ. N 140
ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ <<ԳՈՂԹԱՆԻԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 5-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջներով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2018 թվականի ներքին աուդիտի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Գողթանիկի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում անցկացնել 2015-2017 թ.թ.-ների բյուջետային տարվա գործունեության ֆինանսական աուդիտ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Վասակ Կարապետյանի, ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ Նորայր Կարապետյանի, Հասմիկ Ավետիսյանի և Խիկար Խաչատրյանի կողմից:
2. Խմբի աշխատանքներին մասնակից դարձնել վերոհիշյալ ՊՈԱԿ-ի տնօրենին և հաշվապահին:
3. Աուդիտի անցկացման ժամկետը սահմանել 5 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2018 թվականի դեկտեմբերի 11-ին, ավարտել 2018 թվականի դեկտեմբերի 17-ին:

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ